# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «վերանորոգման աշխատանքների կատարման» ձեռքբերման նպատակով կազմակերպված Ն«ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՇՁԲ-19/49» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի 23 սեպտեմբերին կնքված Ն«ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՇՁԲ-19/49-1» պայմանագրում 2019 թվականի նոյեմբերի 08-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ**

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի գլխ. մասնաշենքում առաջին հարկի միջանցքին հարակից սենյակի վերանորոգման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն՝**

Պայմանագրի 8.5 կետին համապատասխան հաստատել №1 չափաբաժինը, այն է՝ «վերանորոգման աշխատանքների կատարում» ավելացնել պայմանագրի գնի մինչև 10(տաս) տոկոսի չափով:

Պայմանագրի 5.1 կետում նշված 5600000 (հինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «6159475»(վեց միլիոն հարյուր հիսունինը հազար չորս հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամով» բառերով:

**Փոփոխության հիմնավորում՝**

Առաջին հարկի վերանորոգված միջանցքի հետ համադրելիությունը ապահովելու անհրաժեշտություն:

ՀՀ Գնումների մասին օրենքի 23-րդ հոդվածի 3 կետ:

Պատվիրատու՝ **ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ**

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

23/09/2019 թվականին կնքված
N«ՀԱՅԿԵՆՍ-ԳՀ ԱՇՁԲ-19/49-1» գնման պայմանագրի

ք. Երևան «09» 11 2019թ.

ՀՀ ԳԱԱ "Հայկենսատեխնոլոգիա" ԳԱԿ ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սաղյանի, որը գործում է Կենտրոնի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Պատվիրատու), մի կողմից, և "Հազարաշեն" ԱԿ-ն ի դեմս տնօրեն Օ. Աբգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ Կողմերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 23.09.2019 թ. կնքված N«ՀԱՅԿԵՆՍ-ԳՀ ԱՇՁԲ-19/49-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, ինչպես նաև, որ պատվիրատուի մոտ առաջացել է լրացուցիչ ծավալների գնման անհրաժեշտություն, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

-Հաստատել Պայմանագրով նախատեսված աշխատանքների ավելացած ծավալների ծավալաթերթ-նախահաշիվը

-Պայմանագրի գինը ավելացնել **559 475 (հինգ հարյուր հիթսունինը հազար չորս հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամով և սահմանել 6 159 475 ( վեց միլիոն հարյուր հիթսունինը հազար չորս հարյուր յոթանասունհինգ)ՀՀ դրամ:**

-Պայմանագրով նախատեսված աշխատանքների վճարման ժամանակացույցը հաստատել նոր խմբագրությամբ՝ ըստ սույն համանայնագրի հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պատվիրատու | Կապալառու |
|---|---|
| ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» | "Հազարաշեն" ԱԿ |
| գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ | Ք. Գավառ, Վ. Փոշոտյան 1 |
| 0056, ք. Երևան, Գյուրջյան փ., 14 | "ԱԿԲԱ" Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ |
| Երևանի թիվ 1 ՏԳԲ 900018005729 | Գեղարքունիքի մասնաճյուղ |
| ՀՎՀՀ 00871944 | ՀՀ 220083330203000 |
| Տնօրեն՝ Ա.Ս. Սաղյան | ՀՎՀՀ 08400329 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |